ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«18» մայիս 2017թ. No 27 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏՇԱՃ ԼԱԲՈՐԱՏՈՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Դեղերի մասին» օրենքի 13-րդ հոդվածը՝

Հրամայում եմ

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում նախակլինիկական հետազոտություններն իրականացվում են Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի N 2004/10/EC դիրեկտիվի համաձայն հաստատված «Պատշաճ լաբորատորային գործունեության ուղեցույցի» կամ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Խորհրդի 2016թ. նոյեմբերի 3-ի N 81 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական միության պատշաճ լաբորատորային գործունեության կանոնների» համաձայն:
2. Սույն հրամանը ուժի մեջ մտնելու հաջորդ օրը «Պատշաճ լաբորատորային գործունեության ուղեցույցը» և «Եվրասիական տնտեսական միության պատշաճ լաբորատորային գործունեության կանոնները» տեղադրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում (www.moh.am):

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ